Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Փաշաբեզյանը վերահաստատվել է իր պաշտոնում

2017 թ. հունիսի 11-ին Երեւանում գումարված Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 5-րդ նստաշրջանի 2-րդ նիստում Արեւմտյան Հայաստանի Հանրապետության վարչապետ է հաստատվել Տիգրան Փաշաբեզյանը, որի թեկնածությունը առաջադրել է հին կառավարության հրաժարականը ընդունած Արեւմտյան Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Ռադիկ Խամոյանը:

Հիշեցնենք, որ Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 5-րդ նստաշրջանի ավելի վաղ տարածած հաղորդագրության մեջ ասված էր, որ Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմենակ Աբրահամյանի լիազորությունները դադարեցված են Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական օրենքների կոպիտ խախտումների եւ իշխանության յուրացման փորձի մեզադրանքներով:

Արմեն Տեր-Սարգսյան՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ

Դիանա Գրիգորյան՝
Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի Քարտուղար

11.06.2017 թ.